# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի կռնակը).

Թիւ 3:

Թ. 1ա.—Յիսուս որդի լոյս գերարփի... այլ:

Ով ծառայ Աստուծոյ ընդէր կու վախես. թող մէկ Բ օր կենայ, բայց դու ողջ լեր ի Տէր Ա. Խ. Վ.:

Գրեալ է գիրքս ձեռամբ Ստեփաննոսի ումեմն ի թուին Հայոց 810 որ է թուական Փրկչին Յիսուսի 1331:

(Կա մի փոքր ձվաձև կնիք, 2,3×1,9 սմ. չափերով, որ ներկայացնում է Եգիպտահայոց առաջնորդ Գաբրիել Եպիսկոպոս Մարաշեցու կնիքը)

Է—Գաբրիէլ Եպսկ.:

Թ. 1բ.—Թիւ 3:

Յիշատակ եմ արարեալ գիրքս Եգիպտոսի Սուրբ Աստուածածնայ վանուց և Խորէնեան դպրոցին, ձեռամբ Սրբոյ Երուսաղէմայ միաբան Մկրտիչ Եպիսկոպոսի:

1864 նոյեմբեր 11:

(Կա դարձյալ նույն կնիքը)

Է—Գաբրիէլ Եպկս.:

Թիւ 3:

## № 251

### ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԵՒ ԲԱՌԱՐԱՆ

**Թերթերը՝** 99:—**Պրակները՝** 10, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները՝ Ա՝ 4, Ժ՝ 5, Դ՝ 7, Գ՝ 10 և Բ՝ 13 թերթերից են:—**Մեծությունը՝** 13×9,7×2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և խունացած թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակները՝** սկզբից և վերջից մեկական տպագիր թուղթ:—**Վիճակը՝** անբավարար, պակասավոր:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** կանոնագիրքը՝ 20, իսկ բառարանը՝ 21—24:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը և պատվիրատուն՝** Պետրոս:—**Ժամանակը՝** ԺԷ—ԺԸ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրն ստացվել է նվեր արտասահմանից Վեհափառ Հայրապետի միջոցով:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 1ա—34բ.—Կանոնագիրք:

Թ.թ. 35ա—99բ.—Բառարան:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 82ա.—Ով սուրբ թողութիւն արա՛ փիտելոյ գրոյս:

Թ. 85ա.—Աւարտ սորին ի փառս Աստուծոյ ամէն: Ո ոք հասցեյաշխատութեանց աստի թողութիւն շնորհեսցէ գինչ գիտելոյ զգիրս, զի կար ի յոյժ տկար էի յայսմ բանի: Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զգծողս և զստացող սորա զՊետրոս և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ ամէն:

## № 252

### ՏՕՆԱՑՈՅՑ

**Թերթերը** 163:—**պրակները՝** 16, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ ԺԵ և ԺԶ պրակները որոնք 9-ական թերթից են, Ա և ԺԴ՝ 8, ԺԲ՝ 10 թերթից են:—**Մեծությունը՝** 13×9,5×2,9 սմ.:—

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից և 1970 թվականի №№ Դ—Ե-ից:

**Նյութը՝** դեղնած ողորկ դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** լաթակազմ ստվարաթուղթ, կռնակը կաշի:—**Պահպանակները՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, սակայն սկզբից թերի և միջից էլ թերթերը պոկվում են:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** անհամաչափ, 21—25:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հասարակ գեղեցկությամբ մի հատ գլխազարդ (թ. 31ա) և սակավաթիվ թռչնագրեր և զարդագրեր, թռչուններ և ծաղիկներ, լուսանցազարդեր: Վերնագրերն և սկզբնատառերը գրված են կարմիր գույնով: Զարդագրության համար օգտագործված է միայն երկու գույն՝ կապույտ ու կարմիր:—**Գրիչը՝** անհայտ.—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԸ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրն ստացված է նվեր Երևանի հավատացյալ մի բնակչուհու կողմից, Մայր Աթոռի միաբան տ. Նարեկ վարդապետ Ռաքարյանի միջոցով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրի ընդհանուր բովանդակությունը տոնացույց է:

Թ. 114բ.—Քաղուածք շարականաց ըստ խորհրդոյ տօնից սրբոց և Տէրունական տօնից:

Թ. 160ա.—Կա վերադիրի մի աղյուսակ:

Թ.թ. 161բ—163բ.—Կա 5 էջ աղյուսակ գիր տարվո:

Թ.թ. 114բ—151ա.—Թերթերը գրված են նույնական խազերով:

Թ.թ. 158ա—160բ.—Սույն երեք թերթերը դեղնած և կեղտոտած մագաղաթ են, գիրը՝ բոլորգիր, բովանդակությունը՝ պարզատոմար:

## ՄԱԳԱՂԱԹԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 158ա.—...որք ընթեռնուք սիրով սրտի, յիշ(թ. 158բ)ման արէք զՄ.զ արժանի անուն մեղօք ի յի:

Թ. 158բ.—Ծանիր ո՞վ ընթերցող, հոգոյ գալըստեանն կիրակի օրն բարեկենդան է եղիական պահուցն:

Թ. 159ա.—Դարձեալ ծանիր ո՞վ ընթերցող, որ թւ. ծննդեանն բարեկենդանն ի չորեքշաբթի գայ, դու ի երեքշաբթի արայ:...

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 15բ.—Ապշ. ճն. հգս. տեղն:

Թ. 19ա.—Ուրախ:

Թ. 87ա.—Գձ. որք տաց.:

Թ. 89ա.—Բաղդ հուլքի:

## № 258

## ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 293:—**Պրակները՝** 26, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներից՝ Ա՝ 4, ԻԵ՝ 5, Գ՝ 8, ԻԴ՝ 9, Թ՝ 10, Ա՝ 13 և Ե՝ 16 թերթից են:—**Մեծությունը՝** 19×10×4,7 սմ.: **Նյութը՝** ողորկ հաստ թուղթ, տեղ-տեղ խունացած:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի կռնակում գրված է ոսկեգույն տառերով «Յոտշամ» («Մաշտոց» բառը հակառակից կարդացված) և 619 համարը:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական գունավոր հասարկ թուղթ:—**Վիճակը՝** լավ, սակայն տեղ-տեղ պրակները թուլացել են: Վերանորոգության ժամանակ, որոշ թերթեր հետ-առաջ են ընկել, ինչպես օրինակի համար 51—54 համարներով չորս թերթերը Գ-րդ պրակից ընկել են Ե-րդ պրակում: Տեղ-տեղ ցեցակեր է:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1—4 և 289—293, հասարակ բարակ թղթեր, որոնք ավելացվել են հետագայում ձեռագրի վերանորոգության ժամանակ:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն ձեռագիրը հանդիսանում է 17-րդ դարի հայկական զարդագրության հիանալի նմուշներից մեկը: Օգտագործված են ոսկեգույնը, ինչպես նաև կարմիր, վարդագույն, կապույտ, կանաչ և մի քանի այլ գույներ: Կան չորս թերթ, ամբողջական էջի ծավալով, որոնք ներկայացնում են չորս Ավետարանիչները (թ.թ. 7բ, 82բ, 131բ և 218բ): Կան չորս հատ շատ գեղեցիկ խորաններ (թ.թ. 8ա, 83ա, 132ա և 219ա): Կան նաև բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր և գմբեթներ, ծառեր և ծաղիկներ, խաչեր և սրբեր, ծաղկամաններ, թռչուններ և թիթեռներ: Ձեռագիրն ունի բազմաթիվ գեղեցիկ թռչնագրեր և ծաղկագրեր, մի հատ հրեշտակագիր (թ. 8ա), երկու հատ գազանագիր (թ.թ. 83ա և 132ա), մի հատ միացյալ թռչնագիր և օձագիր (թ. 219ա) և չորս հատ էլ միացյալ թռչնագիր և ձկնագիր (թ.թ. 83ա, 148բ, 208ա և 235ա):—**Գրիչը՝** Աստվածատուր քահանա:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** Ալեքսիան:—**Ժամանակը՝** 1660 թ.:—**Վայրը՝** Ջուղա, Սպահան (Նոր): **Ծանոթություն՝** սույն արժեքավոր ձեռագիրն ստացված է նվեր Կալկաթայի ս. Նազարեթ եկեղեցու վարչությունից Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թ. դեկտեմբեր ամսին:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 207բ.—Զմեղապարտ ծրողս յիշեա Տէր:

Թ. 285ա.—Յիշատակարան գրոցս (տեղ-տեղ ցեցակեր է).

Փառք Հաւրն անհասի՝ և թարգ սահմանելոյ՝ յոչ էից գոյացուցչի զբնաւ յինելութիւնս որ ինչ յերկինս՝ ...ինչ յերկրի: Եւ Որդւոյն միածնի զհամօրէն գոյսս ի ցուցակութիւն և ի հաս... ումն ածողի: Եւ ամենազօր Հոգւոյն Աստուծոյ զարդարողի և ի կենդան...նութիւն մակակոչողի. զէիցս եղելութիւն անսպառ յաւի(թ. 285բ)տենիւ և անպայման կէտահարութեամբ:

Որոյ ամէնառատ և անքաւազօր մարդասիրական գթութեամբն, և հայրական արգատալիր և անարգամեծար նա... նամութեամբն: Ես չարակենցաղ և թշուառաքախտիկ. յոգնաքիծ... եղեռնալիր գիծով աղյցեալ Աէքսիանէ ամենանուաստ ծառայս և սպասաւորս մեծի և գերահռչակ Սուրբ Աթոռոյս Ջուղայոյ նորակերտ և երկնահանգէտ սրբոյ տաճարիս՝ որ է զարդարեալ և յօրինեալ ոսկեզօծ և յուսանճաճանչ նկարակերտութեամբ և անդրիագիծ ենկնաքատակ և ակնախտիղ տեսաւորութեամբ ստացայ և ունակացուցեալ իւրացուցի զսուրբ և զկ...ն ընծայ յնդեմա-

բուխ դրախտէն քառյառաջնեալ և յաւէտախաղաց որոտընդոստ գնացիւք յընդհանուր տիեզերս արտածաւալեալ:

Թ. 286ա.—Զհոգևկեցոյց և նրկնահրաւէր զաւէտաւէր բան Տեառն և Փրկչին Քրիստոսի Աստուծոյ, որ յառաջապատրաստ ամօք և յերկարածիգ յամայրամ ժամանակօք, սրտատուչոր սիրով և երիթացեալ գուլիւ, անդուլ վարանմամբ և անհանգիստ տուայտակարգ հոգւոցս հեղիւսեալ և քննեալ ունէի, բայց ոչ կարէի վաղահաս և դիւրագիւտ լինել ըստ քորքոքումն և խնդրոյ սիրոյս տենչանաց յանձնոնհասութեանէ միանգամայն և ի չքաւորութեանն պակասութենէ այլ այն որ գիղձս ամենից բնաւիցս յնու յորդորելով առ ի դիտումն բարւոյն տեսանելով զցանկորդեալ վարանումն իմ յայս ...ար հոգիամերձ գործառնութիւնս տնկեաց ի սիրտս և յօժարեցոյց զարս քրիստոսա... զկանայս երկիւղածս և զբարեպաշտօնս զաւրինամերձ ազգայինս մեր՝ և զայլս օտարացեղս: Յորոց սա տարուեաց օժան(թ. 286բ)դակեալ ետու գրել ի լաւ և յընտիր օրինակաց զքրիստոսախօս բուրաստանս սիւողաքայիւ յօրինեալ և ստիքերոնիւ զարդարեալ ոսկէճաճանչ նկարիւ և երփնագունակ տարափայլող ...ի ձեռն ումեմն մտավարժի և անհամեմատ նկարակերտի հայրապետ անու...րաձայնելոյ ի մխիթարութիւն և ի զբոսանս հոգւով խ...ցէ լոյս, և զկնի ելիցն մեր ի խաւարային տաղաւարէս, ում տացէ Տէր վայելել ի փառս իւր և ի գովեստանուն: Յամի թուահաշութեանն տոհմիս արամեան հազարերորդի հարիւրերորդի յութ և ի տասներորդի (1669): Ի թագաւորութեանն պարսից թուրքմանաց Շահ Սուլէյմանի նորոգ նստելոյ զկնի Շահ Ապասի փոքու: Եւ ի վերա դիտողութեան հայլալուսն ցեղի Տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ՝ Սրբազան և բարեփառ կաթողիկոսի լՀլթոռ սուրբ Էջմիածնի: Եւ յառաջնորդութեան (թ. 287ա) սուրբ Աթոռոյս գեւղաքաղաքիս Ջուղայոյ որ ի Շօշ քաղաքի, այժմ Ասպահան կոչեցելոյ հեզահոգի և քաղցրաբարոյ եռամեծի և արիական ճգնաւորի Դաւթի արհեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի: Որ չիւրով յոգնահանճար խոհականութեամբն առաքինաջան և աստուածուսոյց կրօնիւքն ժողովեալ ունի առ ինքն զդասս սրբազանիցն սրասուն աշակերտելոց յինքենէ յառաջ բերելոց վարդապետաց միանգամայն և քահանայից սրբակրօնից և նկարակրթեալ հայրաբար սիրով յանձն անձէ զանցն իւրսն կրկնակի մարդով և երկու աշխարհաւ ամենից զփրկութիւն հոգալով:

Եւ ...եալ զերջանիկ քաջսիրտ վարդապետն Ստեփաննոս Ջուղայեցի, որ իւրովի մաս տո...բն նուաճե և խնամէ զպանդխտեալ ժողովուրդս: Նա ևս զՅակոբ....ն որ երիտասարդական հասակաւ յայսմ (թ. 287բ) ամի փոխեցաւ առ Քրիստոս ի յանանց կեանս:

Արդ մեծաւ աղերսիւ և յոգնատենչ խնդրուածովք զերեսս ի գետին դնելով համրուրեմ զներբանս ոտից ձերոց, աղաչեմ զամենեսեան զհամօրէն վերոյգրեալսդ, զհարսդ միանգամայն և զեղբարսդ զընթերցողսդ և զգաղափարողսդ՝ և կամ հարևանցի իմն ի տեսութիւն եկեալ ...եցողսդ ...մտօք և բոլոր հաւատով յիշեսջիք զմեզ ի մաքրափայլ յաղօթս ձեր, մանաւանդ ի ժամ ահեղ և սոսկալի Սուրբ Պատարագին, յորժամ վերացուցեալ շրջաբերիցէք զերնք սրբեանն երգելով: Նաև առաւել զմարմնաւոր ծնօղսն մեր և զօժանդակիչ այսմ գործառնութեան հոգևորի: Զհայրն իմ Մարտիրոս, և զմայրն իմ Հռիփսիմէն, զայր մօրաքեռն իմոյ զԳրիգորն և զիւր կինն զՄերտատն, զԱզատխանն, զՂիսաքեթն, և միւս եղբօրկինն զՀռիփսիմէն, զէլինարն, և զհարազատ եղբայրն իմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ կուսակրօն քահանայն զՏէր Թորոս աբեղայն, և զայլ աշխարհական եղբայրսն իմ զՇահվէլին, զԱղազարն, զԱստուածատուրն, զՅարութիւնն, զՆիկողայոսն, զՊօղոսն, Զօհրապն, զԷմինբէկն, զՄիքայէլն, զՓանոսն և զայլ ամենայն արեան մերձաւորս մեր և զընդանիս, զկենդանիս և զհանգուցեալս, յիշեսջիք և զԱստուած ողորմին ասասջիք միով Հայր մերիւ: Եւ նա որ առատն է ի տուրս բարեաց զձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առհասարակ պարգևեսցէ զերկնից արքայութիւնն և զանսպառ ուրախութիւնն: Ընդ ձեզ և ինձ մասն լիցի Աստուածատուր անարժան .... և անարգ քահանայիս գծողի սորա ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա.—Սոյն գրչեայ Աւետարանը պատկանում է Կալկաթայի Հայոց Ս. Նազարեթայ եկեղեցուն:

Թ. 7ա.—Կալկաթայի Հայոց Նազարեթայ ս. եկեղեցի № 619:

Թ. 7բ.—Յամի Տեառն 1669 (նաև թ.թ. 82բ. 131բ և 218բ):

Թ. 286բ.—Թիւն Փրկչին 1669:

Թ. 293բ.—1118+551=1669:

1917—1669=258:

№ 254

ՏՕՆԱՑՈՅՑ

**Թերթերը՝** 187:—**Պրակները՝** 15, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ ԺԴ՝ 14 և ԺԵ՝ 17 թերթից են:—**Մեծությունը՝** 5,8×14×4,8 սմ.:—**Նյութը՝** դեղնած և խունացած հաստ ու բարակ մագաղաթ, որ շատ հավանաբար Ժ—ԺԱ դարերից է: Ամբողջ ձեռագիրը պալիմսեստ է, կտրված լինելով մի նախորդ ավելի հին ձեռագրի թերթերի ներքևի մասից: Շատ թերթերում, մագաղաթի ամբողջ երկայնքին, ձախակողմյան կողմը, հստակ կերպով երևում է նախորդ ձեռագրի վերջին տողի գրության մի մասը, ինչպես օրինակի համար թ.թ. 27ա—34բ, 159ա—166բ, որտեղ հատուկենտ բառեր միայն կարդացվում են: Իսկ թ. 30ա-ում և թ. 31բ-ում որոշակի երևում են նախորդ ձեռագրից ջնջված երեքական տող:—**Կազմը՝** կաշի, որի վրա ճնշումով մի քանի փոքրիկ զարդեր են նկարված: Բռնիչի մի մասը պոկվել է: Կազմի կռնակում կա երկաթյա մի փոքրիկ օղակ, հավանաբար ձեռագիրը մի տեղից կախելու նպատակով: Տոնացույցը կազմված է վերևից, փոխանակ սովորականի նման ձեռագրի ձախակողմյան կողմից, որով տվյալ թերթը կարդացվելուց հետո շուռ է տրվում դեպի վերև, փոխանակ դեպի ձախ:—**Պահպանակները՝** սկզբում երկու թերթ, իսկ վերջում էլ կես

թերթ ավելի հին մագաղաթ, որի գրությունը նմանվում է ավելի Լազարյան Ավետարանի տառերին, որով շատ հավանաբար Թ դարից է։—**Վիճակը՝** շատ լավ։—**Գրությունը՝** միասյուն։—**Դատարկ թղթերը՝** 1։—**Տողերը՝** ձեռագրի սկզբում 19, իսկ վերջում 20։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի բավականին գեղեցիկ զարդագրություն, որտեղ օգտագործված են առհասարակ կարմիր և կապույտ գույները։ Ձեռագիրն ունի մի հատ կիսախորան (թ. 3ա), երեք հատ գլխազարդ թ.թ. 34ա, 80ա և 147ա), մի հատ մարդագլուխ զարդագիր (թ. 169ր), երկուական հատ խաչ և ծաղիկ, բազմաթիվ լուսանցազարդեր, թռչունններ, զարդագրեր, թռչնագրեր։ Ձեռագրի մնացյալ գլխատառերը գրված են կարմիր գույնով, իսկ բոլոր Լջերում քաշված են լուսանցքի երկու գծեր, ձախից և աջից, կարմիր թանաքով։—**Գրիչը՝** Ալեքսանդր աբեղա։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1484 թ.։—**Վայրը՝** Ցողացքարա վանք։—**Ծանոթություն՝** Մայր Աթոռի Ձեռագրատունն նվեր է ստացել սույն արժեքավոր ձեռագիրը ԱՄՆ-ից։ Դետրոյտաբնակ Միքայել և Ազնիվ Արթինյան ամուսինների կողմից, Վեհափառ Հայրապետի միջոցով։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 2բ—72բ.—Տոնացույց։

Թ.թ. 80ա—145բ.—Մեղեդիներ և աղոթքներ (այս բաժնի թ.թ. 80ա—134ա-ում օգտագործված են հայկական հին խազերը)։

Թ.թ. 146բ—185բ.—Տոմար։

(տրվում է գլխավոր գլուխների վերնագրերը)։

Թ. 147ա.—Զկրկնակ ամսոց այսպէս արա։

Զկիսակ ամսոց այսպէս արա։

Թ. 151բ.—Առաջաւորաց բարեկենդան այսպէս արայ։

Թ. 153ա.—Աւագ լրումն զատաց այսպէս արայ։

Թ. 154ա.—Յաղագս անշարժ եղանակաց տաւնից։ Համառաւտ։

Թ. 165ա.—Տարեմուտ ամենայն ազգաց։

Իսկ մեծ հայի վերադրաւն զամենայն ազգաց վերադիր այսպէս արայ։

Թ. 165բ.—Լրումն ամենայն ազգաց այսպէս արայ։

Թ. 166ա.—Յաղագս որ քննութեան սուրց։

Յաղագս տարոյն թէ որչափ։

Թ. 168ա.—Յաղագս շրջանաց։

Թ. 168բ.—Յաղագս դարուց ժամանակ։

Թ. 169բ.—Պատճէն տոմար հռոմոց։

Զուգաւորութիւն (թ. 170ա) հայոց ընդ հռոմոց այսպէս արայ։

Թ. 174ա.—Առաջաւորաց բարեկենդան այսպէս արայ։

Թ. 175ա.—Աւագ լրումն զատկի այսպէս արայ։

Թ. 175բ.—Յաղագս անշարժ եղանակաց և տաւնից։

Թ. 176ա.—Յորժամ ըստ յունաց տօնախմբութեան։

Թ. 177բ.—Գիր փիլիսոփէական այսպէս արայ։

Թ. 178ա.—Առաջաւոր ամենայն ազգաց այսպէս արայ։

Թ. 178բ.—Յաղագս մեծ յարակային։

Թ. 179ա.—Յաղագս միջ(ի)ն յարակային։

Թ. 180ա.—Յաղագս մեկնութեան տումարիս հռոմոց։

Թ. 184ա.—Յաղագս թվոց ժամանակաց։

(Տոմարի սույն բաժնում կան երեք հատ աղյուսակներ—թ.թ. 146բ, 154բ և 169բ— և երեք հատ էլ շրջանակներ—թ.թ. 182բ, 183ա և 183բ—հայկական տոմարի, տոների, հռոմեական տոմարի, Զատկի և այլն մասին)։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 33բ.—Գրչի անունը տրվում է սյունագիր ծածկագրով.—

Ա լ է ք ս ի ա ն ո ս յ ի շ և ր է ք ի Ք ս. և Աստուած զձ(և)զ յիշէ. ամէն։

Թ. 134ա.—Զանպիտան գրիչս Ալեքսանդրոս յիշեա ի Տէր և Աստուած զձեզ յիշէ։

Թ. 145բ.—Զանպիտան գրիչս Ալեքսանդր աղաչեմ յիշել ի Տէր և յիշողդ յիշեալ լ(ի)ջի ի Տէր, ամէն։

Թ. 184ա.—Ով եղբայր վասն բոլորակիս մի մեղադրիլ զի նեղ էր և դժուարագիր։

Թ. 185բ.—Յիշատակարան գրոցս։

(Փ)առք ու արհնութիւն Հաւր անծնին և Էակցի Որդոյ նմին, և փառակից Հոգոյ նորին յատկատէմ և զուգապատ(թ. 186ա)իւ երից անձանց, և միո բնութեան և աստուածութեան Հօր և Որդո և Հոգոյն սրբոյ, յօիտեանս ամէն։ Արդ գրեցաւ տաւնացոյցս և կիսատետրս ի թվականիս հա(յ)ոց մեծաց ՋԼԳ (1484 թ.), ի վանքս Ցօղացքարա ընդ հովանեաւ կէանսաբեր Սուրբ Նշանիս, և Քրիստոսի սուրբ բնեռիս և այլ բազմութիւք սրբոցս որ աստ կան։

Արդ գրեցաւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Գրիգոր Եպիսկոպոսին, ձեռամ(բ) յոգնամեղ և պիտականուն Ալիքսանդրոս անուամ(բ) միայն և գործով յունայն աբեղայի։ Արդ յիրեսս անգեալ աղաչեմ զամենեսեան, հայրք և եղբայրք, յիշեցէք ի սուրբ և մաքրափայլ (թ. 186բ) աղաւթս ձեր զհայրն իմ զԷտկեարն և զմայ(ր)ն իմ զՄարթայ, և հարազատ եղբայ(ր)քն իմ զՍյհանէսն, Աթանէսն, Իբրիանոսն, Յովաննէսն և զքեոքըն իմ։

Ով ընթերձող սուրբ քանանայ վասն սղալանաց և խաշորանաց գրոցս խազտետրիս և Բ ազգ բուն տաւմարիս հռոմի և հայի թողութիւն արարէք, զի կար մեր այս չափս էր և ոչ աւելի։ Աւրհնեալ է Աստուած, ամէն, եղիցի եղիցի։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Ի յարկե որ քեզի պիտի։

Ի յարկե որ քեզի սիրելի։

Թ. 2ա.—Միքաէլ Ազնիւ Արթինեան,

64 Winona Highland Park, Detroit, Mich.։

Թ. 56բ.—Անիտկոսի և Փոտինոսի։

Թ. 57ա.—Անիտկոսի և Փոտինոսի։

Թ. 61բ.—Վկա, նոր, արա, կլայ։

Թ. 62ա.—Ներսէսի Կլայեցոյն։

Թ. 68ա.—Ես եղեք Եակոսի։

Թ. 68բ.—Ես Բասիլիսկոսի (թ. 69ա) քահանայն որ Ամասիեայ կատարու։

Թ. 71բ.—Որ լուսո զԱստուծոյ, յիշատակ Քրիստոս:

Թ. 72բ.—Ըզիշատակ:

Թ. 142բ.—Հաւատոյ Աստուած:

Թ. 187բ.—(Կա 13 տող որի մի մասը անընթեռնելի է.):

.....Քրիստոս Աստուած մեր ...խոստովան, մինչև ...ուրուՆս ...ասենք ...դուռն ողորմութեան և ..զշնորհեալ ...փառաց ...մեզ զդրուՆս ..թվ.:

№ 255

ԿՈՆԴԱԿ

**Թերթերը՝** 1:—**Մեծությունը՝** 46×372 սմ.:—**Նյութը՝** ոորկ, հաստ, սպիտակ թուղթ, տեղ-տեղ դեղնած:—**Կազմը՝** կոնդակի սկզբում շուրջ 145 սմ. երկայնքով սպիտակ շոր է կպցված հետևից:—**Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ պատռած, և սկզբից պակասավոր (նկարի վերևի մասը պակասում է):—**Գրությունը՝** միասյուն:—**Տողերը՝** կոնդակը՝ 187, իսկ ներքևի ստանավորը՝ 32 (երեք սյունակի վրա է գրված):—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** Նոտրգիր:—**Զարդագրությունը՝** սույն արժեքավոր ձեռագիր կոնդակն ունի նկարչական գեղեցիկ կոմպոզիցիա, որ բռնում է կոնդակի հատկանշական մի հատվածը, 36,7 սմ. լայնքով և 163 սմ. երկայնքով: Սկզբում նկարված են առաքյալներն ու ավետարանիչները, ապա երկնքից իջնող Աստված և հինգ հրեշտակներ: Հետո հերթականությամբ նկարված են ձախին՝ Մարիամ Աստվածածին, իսկ աջին՝ Գաբրիել հրեշտակապետ, ներքևում երեք գմբեթանի տաճարը, զանգակատնով, երեք զանգերով և երեք խաչերով, տաճարի դռանը կանգնած է վանահայրը, տաճարի երկու կողմերին կանգնած են երկու սրբեր, ձախինը, տղամարդ, ձեռքին ունի գառնուկ և խաչ, իսկ աջինը՝ կին, ձեռքին ունի տապանակ և բուրվառ: Տաճարի ներքևում կա արեգակը իր ճառագայթներով, որի կենտրոնում, 4 սմ. տրամագծով, կա Գլակա վանքի կնիքը: Արեգակի երկու կողմերում կան երկու հրեշտակներ որոնք բռնած են արեգակը:

Ներքևում նկարված է 18 հոգիանոց հոգևորականների մի խումբ: Ձախին նստել է մեկը, որի բռնած գրքի վրա գրված է «Գրիգոր», իսկ կողքերին կանգնած են հինգ հոգևորականներ, որոնք ունեն մեկական գիրք իրենց ձեռքին: Գրքերի վրա գրված են հետևյալ անունները՝ «Եղիշէ, Ներսէս, Ներսէս, Սարգիս և Մովսէս»: Մնացյալ 12 հոգևորականները գիրք չունեն: Երկու Ներսեսները միայն խույր ունեն գլխներին իսկ գրքերից բացի, մեկական Եպիսկոպոսական գավազան ձեռքերին, իսկ մնացյալ 16 հոգևորականները վեղար ունեն գլխներին և ձեռքերին էլ մեկական վարդապետական գավազան:

Սույն կոմպոզիցիայի ներքևում նկարված է հետևյալը.—ձախին նստած է Եպիսկոպոսը, որ վարդապետական գավազանը հանձնում է իր առջևում ծնրադրած վարդապետին: Կողքին կանգնած են երկու վարդապետներ, որոնք ձեռքներում ունեն մեկական գիրք, երկու դպիրներ՝ որոնք բռնած են մեկական երկար մոմ, և փուրվառ անող մի վարդապետ: Եպիսկոպոսի հետևում երևում է ժողովուրդը:

Վերոհիշյալ նկարի ներքևում էլ նկարված են զարդեր, ծաղիկներ, 5 կանթեղներ, որոնց վերևում կա մի փոքր կնիք, 2,2 սմ. տրամագծով, որ ներկայացնում է Հակոբ վարդապետի կնիքը: Կանթեղների երկու կողմերում կա մեկական աշտանակ, ձախինը՝ 7-ական մոմանոց, իսկ աջինը՝ 3-ական մոմանոց: Սրանից ներքև կա մի տող գրված շատ սիրուն մեծ թռչնագրերով: Սրա ձախակողմյան անկյունում նկարված է մի հրեշտակ, ծաղիկներ և զարդեր, իսկ վերևում էլ մի թասի մեջ Հովհաննես Մկրտչի կտրած գլուխը: Ամբողջ այս երկար նկարի երկարությամբ ձախին և աջին կա մեկական լուսանցք, 2—2,5 սմ. լայնությամբ, ներկայացնելով վարդագույն ծաղիկներ և կանաչ տերևներ: Կոնդակի ներքևի մասը, գրության բաժինը, երկու կողմից ունի մեկական լուսանցքի գիծ, վարդագույն, որի լայնքն է 1,5 սմ.:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Հակոբ վարդապետ Պոլսեցի:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1800 թ.:—**Վայրը՝** Մշո սուրբ կարապետ վանք (Գլակա վանք):—**Մանոթություն՝** սույն կոնդակը ստացված է նվեր Մայր Աթոռի միաբան տ. Մեսրոպ վարդապետ Պալյանից, 1963 թ. նոյեմբեր ամսին: Դա ձեռք է բերվել Բաքվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Հակոբ վարդապետ Պոլսեցու վկայության թուղթն (կոնդակը) և օրհնության գիրը Ստեփաննոս վարդապետի ծայրագունության աստիճան տալու առթիվ):

...Եւ ի սմանէ ընկալաւ Յակոբ վարդապետ շամախեցի՝ որ եղև կաթողիկոս ի սուրբ Էջմիածին: Եւ նա ետ զայս գաւազան իշխանութեան Տեառն Զաքարիայ վարդապետին կաղզվանցւոյ՝ որ եղև հռչակաւոր Պատրիարգ մեծին Պօլսոյ, և ի նմանէ ընկալայ ես Յակոբ ապարդիւն վարդապետս պօլսեցի՝ և ոչ թէ միայն զայս նեթ, այլ զամենայն աստիճանս կարգի և սպասաւորութեան Եկեղեցւոյ, սկսեալ ի կղերիկոսութենէ անտի մինչև ի յսպասաւորութիւն: Եւ յետ ամենայնի ըստ կանոնի և սահմանադրութեան նախնեաց՝ ընկալայ զայս աստիճան ծայրագոյն վարդապետութեան որ կոչեցեալն է յառաջնոց եկլէսիաստիկան գաւազան: Իսկ ըստ տնօրինելոյ բարեշնորհ կամաց Տեառն և յաջողելոյ, և բազմագումար Սիւնհոդոսական խորհրդով ազգիս մերոյ բարեհամբաւ իշխանապետացն Պօլսոյ՝ և հաճութեամբ նոյն ծնողին իմոյ Սրբազան Պատրիարգ Հօրն, որոյ գեղաշուք կոնտակաւն և Արքունական բարձրագոյն Պէրաթ Ֆերմանաւն, ի ՌՄԽԳ (1794 թ.) թուոջն՝ կացուցայ աւելածու և սպասաւոր Մշու Սրբոյ Կարապետի գերահրաշ Աթոռոյս, միանգամայն և Առաջնորդ Կարնո մեծի մայրաքաղաքին:

.....Եւ դէպ նղև մեզ գալ ի յայցելութիւն Կարնոյ քաղաքի քահանայից և ժողովրդոցն, յայնս աւուրս ի նոյն քաղաքէ, Թէրգի ուստա Մարտիրոսի որդի Նէսիպ անուանեալն, ի մանկական հասակին ատեալ զաշխարհ և թողեալ զմամնաւոր ծնօղսն իւր՝ եկն առ մեզ ի յորդեգրութիւն, որ և առեալ առ մեզ բերաք ի Սուրբ Աթոռս, կրթելով զնա ի պարկեշտ

վարս և ի համեստ բարս, վարժելով յընթերցումն Աստուածային գրոց՝ Հին և Նոր կտակարանաց, և յետ այնր ըստ ըղձանաց սրտի իւրոյ՝ նստու զչորեսին աստիճանս դպրութեան, և հետևաբար զաստիճանս սարկաւագութեան անուանակոչելով զնա Ստեփաննոս, և ապա ձեռնադրեցի զնա ի կարգ կրօնաւորական քահանայութեան՝ վեղարաւ պերճացուցի զնա: Եւ յետ անցման աւուրց՝ շնորհեցաք նմա զչորեսին աստիճանս մասնաւոր գաւազանի, և կացուցաք զինքն լուսարար Սրբոյ Կարապետի լուսապարուր գերեզմանին և Սրբոց Տաճարաց և այլ Սրբութեանց և Սուրբ Մասանց և Սուրբ Մատրանաց: Եւ ի յանցանել միջոցի ինչ՝ ըստ նախասահման տնօրինման Աստուծոյ, ի հազար երկերիւր քառասներորդի և իններորդի (1800 թ.) թուոջ տումարիս մերոյ և յամսեանն հոկտեմբերի Ժ յաւուր շաբաթու ի հրաշափառ տօնի Սրբոց Հրեշտակապետաց Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրաց, յերեկոյեան պահու, ի մէջ մեծի Եկեղեցւոյս առաջի Սրբոյ Կարապետի լուսացնծող Գերեզմանի, և Աթոռանգինեայ Սուրբ Հայրապետի մաքուր շիրմի, ի ներկայութեան դասուց Եպիսկոպոսաց և վարդապետաց և բոլոր սպասաւորաց և պաշտօնէից և մանկանց Սրբոյ Եկեղեցւոյ, և միաժամայն ոմանց Պոլսեցի իշխանաց ի յուխտ եկելոց, ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան, ձեռնադրեցաք զհոգեծին որդին իմ զՍտեփաննոս վարդապետն շնորհելով սմա զտասներին աստիճան ծայրագոյն էկլէսիաստիական գաւազանի վարդապետութեան, ի վերայ չորից աստիճանաց մասնաւոր վարդապետութեան:

.....Ի վերուստ իսկ՝ յերկնից ցոլեալ.
Հօրէն յուսոյ՝ ձիրք բարետրեալ,
Որպէս աւէ՝ գագաթն ընտրեալ.
Դիոնէսիոսն՝ Աստուածարեալ:

Յորմէ լուսոյ՝ լոյս ծաւալեալ.
Բանն և Որդին՝ ճառագայթեալ,
Յաշխարհ իջեալ՝ և մարմնացեալ.
Փրկեալ զմեզ՝ առ ինքն ածեալ:

Որ զառաքեալս՝ իւր ձեռնադրեալ.
Իշխանութիւն՝ նոցա տուեալ,
Եւ հրամանաւ՝ զօրացուցեալ.
Ընդ տիեզերս՝ քարոզ յղեալ:

Հոգւոյն Սրբոյ՝ շնորհիւ լցեալ.
Մացս աշխարհի այնք ժամանեալ,
Զխաւար մեղաց՝ բաց փարատեալ.
Եւ հաւատով՝ լուսաւորեալ:

Անտի աշակերտս յստացեալ.
Եւ զզնոսա՝ ձեռնադրեալ,
(Ե)ւ իշխանութեամբ՝ պերճացուցեալ.
(Ե)ւ ի նոցանէ՝ յայլս աձանցեալ:

Նոյն բարուենաց՝ կաճարս ցոլեալ.
Դասէ առ դաս՝ շառաւիղեալ.
Ի նոցանէ՝ իսկ ծաւալեալ.
Առ ուսատուն մեր ժամանեալ:

Նորին շաւղէ՝ առ այլս ծագեալ.
Ի աձանցմամբ՝ առ այսր շողեալ,
Առ Զաքարիայ՝ Հայր մեր հասեալ.
Որ Պատրիարք՝ Պօլսոյ կոչեալ:

Ի նմանէ՝ առ ընկալեալ.
Զնոյն գաւազան՝ շնորհազարդեալ,
Յակոբ յարգոյ՝ բարուէն ընտրեալ.
Որ Պոլսեցի՝ իսկ համբաւեալ:

*
* *

Սուրբ Ամլորդւոյ՝ յԱթոռն եկեալ.
Վերատեսուչ՝ արժանացեալ,
Զոմանս մանկունս՝ աշակերտեալ.
Վարժեալ զնոսա՝ և կարգ շնորհեալ:

Էր ի նոցունց՝ միոն սա կոչեալ.
Ստեփաննոս՝ Պետ անուանեալ,
Որ յաստիճանըս՝ վերածեալ.
Ի եախկրնոյն՝ մինչ ցայս հասեալ:

Նոյն գաւազան՝ և սա առեալ.
Յիւր Հոգևոր՝ Հօրէն ընկալեալ,
Անծաւորէն՝ վերոյիշեալ.
Արհիապանծ՝ ծնողէն շնորհեալ:

Որ ցնծութեան՝ արդ ժամանեալ.
Առ ծանօթիցս՝ սորին եղեալ,
Զի սա եղբայր՝ մեր պանծացեալ.
Իշխանութեամբ՝ ծայրագունեալ:

Տանն Աստուծոյ՝ եղև տրնկեալ.
Իբրև ձիթենի՝ պարարտացեալ,
Եւ որպէս ջահ՝ լուսափայլեալ.
Շնորհօք Հոգւոյն՝ լուսազարդեալ:

Արդ՝ Տէրըն մեր՝ Փրկիչն օրհնեալ.
Որ ի մեզ է միշտ գըթացեալ,
Նոյն իւր հզօր՝ Աջովն խնամեալ.
Լիցի եղբօրս՝ հովանացեալ:

Պետոսս աճա՝ յայս աշխատեալ.
Զվկայականս՝ շարագըրեալ,
Եւ զսոյն սակաւ՝ բանս չափեալ.
Շնորհաւորման՝ ընծայ ձօնեալ:

Է բոպպէից՝ թիւն գումարեալ.
Բայց զներկերիւր իւրն՝ յարտաքս հանեալ.
Եւ եռ երրեակ՝ ի ներս մուծեալ.
Մետասան ամիսն՝ ուսանաւորեալ:

*
* *

Սիրով տենչիւ եղեր փափաք.
Տենչամբ եղեր ի սէր պարփակ,

Ողէր ի սէր կարգի ճամակ.
Փափաք պարփակ ճամակ միակ։

Արփւոյ նման ոսկեայ սպաս.
Նման ոսկւոյ Նարօտ վակաս,
Ոսկեայ նարօտ յարգոյդ սարաս.
Սպաս վակաս սարաս ի դաս։

Ակայ առմանդ րամեալ դասուց.
Առմանդ րամեալ խմբեալ պարուց,
Րամեալ խմբեալ պետաց ճանուրց.
Դասուց պարուց ճանուրց դարուցն։

Արդ ես պիտակս եմ յոյժ տրփող.
Պիտակս եմ յոյժ յետնեալ բաղձող,
Եմ յոյժ սիրոյդ Տէր և պարծող.
Տրփող բաղձող պարծող պանծող։

* * *

Եւ տրւողին շնորհաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փառք պատիւ և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Գլակա վանքի կնիքը, 4 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Հիսուսի մկրտությունը Հովհաննու Կարապետի կողմից։ Կողքին կանգնած է հրեշտակը, իսկ Հիսուսի գլխին էլ աղավնին է իջնում։ Սև կնիքի շուրջ բոլորը գրված է հետևյալը).

Կնիքս Սուրբ Կարապետի գերեզմանին է, որ ի Գլակա վանքն է։

(Հակոբ վարդապետի կնիքը, 2,2 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Հիսուս։ Ու կնիքի շուրջ բոլորը գրված է հետևյալը)

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ վարդապետ է։

(Հիսուսի գլխի երկու կողմերը գրված է). Յս. Քս.։

(Հիսուսի ձեռքում եղած գրքի վրա գրված է). Ես լս.։